ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ
№ 57

ք. Եղեգնաձոր
"23" հունիսի 2017 թ.

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԱՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ և 17-րդ հոդվածի 2-րդ կետերի , ՀՀ Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի, ՀՀ Նախագահի 2017 թվականի մայիսի 15-ի ՆՀ-355-Ն հրամանագրի, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 25-ի «2017 թվականի ամառային զորակոչը կազմակերպելու մասին» № 669-Ն որոշման պահանջներով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հանձնարարել Եղեգնաձորի և Վայքի զինվորական կոմիսարներին (Կ.Բաբայան, Հ. Մելքոնյանին), ՀՀ Վայոց ձորի մարզում , օրենքով սահմանված կարգով , 2017 թվականի հուլիսի 1-ից մինչև 31-ը ներառյալ կազմակերպել և անցկացնել 18 տարին լրացած 1990–1999թթ ծնված և զորակոչից ազատման կամ տարկետման իրավունք չունեցող արական սեռի ՀՀ քաղաքացիների պարտադիր զինվորական և այլընտրանքային ծառայությունների զորակոչը:

2. Մարզում 2017 թվականի ամառային զորակոչը կազմակերպելու համար ստեղծել տարածքային զորակոչային հանձնաժողովներ Եղեգնաձորի և Վայքի տարածաշրջաններում՝ համաձայն սույն որոշման թիվ 1 և թիվ 2 հավելվածների:

3. Զորակոչիկների առողջական վիճակը ստուգելու համար զորակոչային տեղամասերում ստեղծել տարածքային բժշկական հանձնաժողովներ՝ համաձայն թիվ 3 և թիվ 4 հավելվածների:

4. **Առաջարկել՝**

ա) Եղեգնաձորի կայազորի զինվորական դատախազին՝
- Զորակոչից խուսափող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների նկատմամբ օրենքով սահմանված կարգով քրեական հետապնդում հայտարարելու, ինչպես նաև այդ բնույթի գործերով հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու ուղղությամբ աշխատանքների կազմակերպումը վերցնել անմիջական վերահսկողության տակ:
- Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան իրականացնել լրացուցիչ միջոցառումներ ՀՀ-ից դուրս գտնվող, զորակոչից խուսափող անձանց հետախուզման և հանրապետություն վերադարձնելու համար:

բ) ՀՀ ոստիկանության Վայոց ձորի մարզային վարչության պետին՝

- Զորակոչի օրերին կազմակերպել հասարակական կարգի պահպանումը զորակոչային տեղամասերում:
- Կազմակերպել զորակոչից խուսափող զորակոչիկների որոնումը ՀՀ տարածքում և ՀՀ տարածքից դուրս:

5. Հանձնարարել՝

ա) Մարզի բուժ. հիմնարկների ղեկավարներին (Ա. Կարապետյան, Ռ. Ասլանյան, Մ. Նալբանդյան)
- Տեղական զորակոչային բժշկական հանձնաժողովի աշխատանքների պատշաճ կազմակերպման նպատակով դրանցում ընդգրկել համապատասխան առաջատար բժիշկ մասնագետների:
- Զինվորական կոմիսարիատների հայտերով անցկացնել զորակոչիկների ֆլյուորո (ռենտգեն) զննում, սոնոգրաֆիկ հետազոտում, անհրաժեշտության դեպքում կատարել այլ հետազոտություններ, ինչպես նաև տրամադրել անհրաժեշտ բժշկական սարքավորումներ և դեղամիջոցներ:
- Կատարել պլանային պատվաստումներ:
- 2017թ. ամառային զորակոչին եթակա զորակոչիկների բուժումը կազմակերպել առաջնահերթ և բուժման արդյունքների մասին տեղեկացնել զորակոչային տեղամասեր:

բ) Մարզի բոլոր համայնքների և կազմակերպությունների (անկախ կազմակերպական իրավական ձևերից) ղեկավարներին՝
- Ապահովել համայնքներում բնակվող, կազմակերպություններում աշխատող զորակոչային տարիքի ՀՀ քաղաքացիների ներկայությունը զինվորական կոմիսարիատներ՝ համաձայն ներկայացված ցուցակների կամ ծանուցագրերի:

գ) ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչությանը և զորահավաքային նախապատրաստության բաժնին.

- Զորակոչիկներին բարձր տրամադրությամբ պարտադիր զինվորական ծառայության զորակոչելու նպատակով, զորակոչի օրերին կազմակերպել ռազմահայրենասիրական միջոցառումներ:
- Հսկողություն սահմանել համայնքներում զորակոչի նախապատրաստական աշխատանքների ընթացքի վրա և առկա վիճակի մասին իրազեկել մարզային զորակոչային հանձնաժողովին:

6. Սույն որոշման կատարման վերահսկողությունը հանձնարարել ՀՀ Վայոց ձորի մարզային զորոկոչային հանձնաժողովին:

Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ № 1
ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ
2017Թ. ՀՈՒՆԻՍԻ 23
№ 57 ՈՐՈՇՄԱՆ

Եղեգնաձորի տարածքային զորակոչային հանձնաժողով

1. Կ. Բաբայան	- Եղեգնաձորի զինվորական կոմիսար	- հանձնաժողովի նախագահ
2. Հ. Ստեփանյան	-«Եղեգնաձորի ԲԿ» ՓԲԸ-ի ավագ բժիշկ	-հանձնաժողովի անդամ
3. Հ. Ասատրյան	–ՀՀ Վայոց Ձորի մարզպետարանի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժնի գլխ. մասնագետ	-հանձնաժողովի անդամ
4. Ս. Գալստյան	- ՀՀ ոստիկանության Եղեգնաձորի բաժնի պետի ծառայության գծով տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ	-հանձնաժողովի անդամ
5. Կ.Հարությունյան	-Եղեգնաձորի ավագ դպրոցի տնօրեն	-հանձնաժողովի անդամ
6. Ս. Հարությունյան	-Վետերանների խորհրդի նախագահ	-հանձնաժողովի անդամ
7. Ն. Ֆիլկովա		-հանձնաժողովի քարտուղար

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Կ.ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ № 2
ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ
2017 Թ. ՀՈՒՆԻՍԻ 23
№ 57 ՈՐՈՇՄԱՆ

Վայքի տարածքային զորակոչային հանձնաժողով

1. Հ. Մելքոնյան	- Վայքի զինվորական կոմիսար	-հանձնաժողովի նախագահ
2. Խ. Նազարյան	-«Վայքի ԲՄ» ՓԲԸ-ի վիրաբույժ, ավագ բժիշկ	-հանձնաժողովի անդամ
3. Գ. Գերասիմյան	- ՀՀ ոստիկանության Վայքի բաժնի պետի ծառայության գծով տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ	-հանձնաժողովի անդամ
4. Թ.Հակոբյան	-Վայքի ավագ դպրոցի տնօրեն	-հանձնաժողովի անդամ
5. Ա.Առաքելյան	–Վայքի քաղաքապետարանի գլխ. մասնագետ	–հանձնաժողովի անդամ
6. Ա.Դավթյան		-հանձնաժողովի քարտուղար

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ **Կ.ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՎԵԼՎԱԾ № 3
ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ
2017Թ. ՀՈՒՆԻՍԻ 23
№ 57 ՈՐՈՇՄԱՆ

Եղեգնաձորի տարածքային զորակոչային բժշկական հանձնաժողով

1. Կ. Բաբայան - Եղեգնաձորի զինվորական կոմիսար -հանձնաժողովի նախագահ

2. Ք. Շահբազյան - «Եղեգնաձորի ԲԿ» ՓԲԸ-ի թերապևտ - հանձնաժողովի անդամ

3. Ի. Շիրինյան -«Եղեգնաձորի ԲԿ» ՓԲԸ-ի ակնաբույժ -հանձնաժողովի անդամ

4. Հ. Ստեփանյան - «Եղեգնաձորի ԲԿ» ՓԲԸ-ի մաշկաբան. ավագ բժիշկ -հանձն. անդամ

5. Ն.Կարապետյան -«Եղեգնաձորի ԲԿ» ՓԲԸ-ի վիրաբույժ -հանձնաժողովի անդամ

6. Վ.Վարդանյան -«Եղեգնաձորի ԲԿ» ՓԲԸ քիթ-կոկորդ-ականջ. -հանձն. անդամ

7. Հ.Հովհաննիսյան -«Եղեգնաձորի ԲԿ» ՓԲԸ-ի սրտաբան -հանձնաժողովի անդամ

8. Ա.Թունյան - «Եղեգնաձորի ԲԿ» ՓԲԸ-ի հոգեբույժ -հանձնաժողովի անդամ

9. Գ.Սիմոնյան -«Եղեգնաձորի ԲԿ» ՓԲԸ-ի նյարդաբան -հանձնաժողովի անդամ

10. Ա.Թումանյան -«Եղեգնաձորի ԲԿ» ՓԲԸ-ի բուժքույր -հանձնաժողովի անդամ

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ **Կ.ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՎԵԼՎԱԾ № 4
ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ
2017Թ. ՀՈՒՆԻՍԻ 23
№ 57 ՈՐՈՇՄԱՆ

Վայքի տարածքային զորակոչային բժշկական հանձնաժողով

1. **Հ. Մելքոնյան** -Վայքի զինվորական կոմիսար -հանձնաժողովի նախագահ
2. **Ռ.Ասլանյան** - «Վայքի ԲՄ» ՓԲԸ-ի մաշկաբան -հանձնաժողովի անդամ
3. **Խ.Նազարյան** - «Վայքի ԲՄ» ՓԲԸ-ի վիրաբուժ, ավագ բժիշկ -հանձնաժողովի անդամ
4. **Ա. Բաղդասարյան** -«Վայքի ԲՄ» ՓԲԸ-ի թերապևտ -հանձնաժողովի անդամ
5. **Հ.Հովսեփյան** - «Վայքի ԲՄ» ՓԲԸ-ի ակնաբույժ -հանձնաժողովի անդամ
6. **Ա.Ասլանյան** -«Վայքի ԲՄ» ՓԲԸ-ի քիթ-կոկորդ-ականջաբան -հանձնաժողոի անդամ
7. **Մ.Ասլանյան** - «Վայքի ԲՄ» ՓԲԸ-ի սրտաբան -հանձնաժողոի անդամ
8. **Ա. Կարապետյան** - «Եղեգնաձորի ԲԿ» ՓԲԸ-ի նյարդաբան, -հանձնաժողովի անդամ
9. **Ա.Թունյան** - «Եղեգնաձորի ԲԿ» ՓԲԸ-ի հոգեբույժ -հանձնաժողովի անդամ
10. **Լ.Կարապետյան** - «Վայքի ԲՄ» ՓԲԸ-ի բուժքույր -հանձնաժողովի անդամ

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ **Կ.ՍԱՀԱԿՅԱՆ**